«ՄԱԲՆԱ ԲԵՀԻՆԵՀ ՍԱՋԱՆ ՆԻՐՈՒ» ՓԲԸ կողմից իրականացվող ՀՀ Սյունիքի մարզի Կապան համայնքի Ծավ բնակավայրում 144 տեղ/հզորությամբ միջնակարգ դպրոցի և 40 տեղ/հզորությամբ մանկապարտեզի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ 1-ին հանրային քննարկման

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

30.09.2024թ. **ք. Կապան**

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՕ-150-Ն օրենքի և ՀՀ կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի N 2343-Ն որոշման հավելվածի /այսուհետ՝ Հավելված/ սահմանված կարգով՝ որպես ազդակիր համայնք ՀՀ Սյունիքի մարզի Կապանի մշակույթի կենտրոնի շենքում 2024 թվականի սեպտեմբերի 25-ին, ժամը 11:00-ին տեղի ունեցավ «ՄԱԲՆԱ ԲԵՀԻՆԵՀ ՍԱՋԱՆ ՆԻՐՈՒ» ՓԲԸ կողմից իրականացվող ՀՀ Սյունիքի մարզի Կապան համայնքի Ծավ բնակավայրում 144 տեղ/հզորությամբ միջնակարգ դպրոցի և 40 տեղ/հզորությամբ մանկապարտեզի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ 1-ին հանրային քննարկումը:

Քննարկմանը ներկա էին Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի սոցիոլոգ Մարի Ջավահիրյանը, «ԱՎ ԿՈՄՊԱՆԻ» ՍՊ ընկերության տնօրենը, ինչպես նաև Կապանի համայնքապետարանի աշխատակիցներ:

Հանրային քննարկման մասնակիցների անհատական կազմը կցվում է սույն արձանագրությանը:

Հանրային քննարկումը վարեց Կապան համայնքապետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ՝ Անդրանիկ Հովակիմյանը: Նա ողջունեց ներկաներին, ներկայացրեց օրակարգը: Որպես ծանոթություն հիշեցրեց, որ Հանրային քննարկման վերաբերյալ կարելի էր ծանոթանալ «Առավոտ» օրաթերթի **2024 թվականի օգոստոսի 28-ի թիվ 143 (7144) համարում**, ինչպես նաև Կապանի համայնքապետարանի պաշտոնական կայքի (www.kapan.am) հայտարարություններ բաժնում:

Համաձայն ՀՀ կառավարության 28.12.2023թ. N 2343-Ն որոշման 21-րդ կետի՝ վերը նշված հանրային քննարկման վերաբերյալ Ձեր առաջարկությունները, դիտողությունները և կարծիքները կարող էին ներկայացնել, ծանուցումից հետո **20** աշխատանքային օրվա

ընթացքում: Հանրային քննարկման վերաբերյալ դիտողություններ կամ առաջարկություններ մինչ այսօր չեն ստացվել:

Զեկույցի համար խոսքը փոխանցվեց «ԱՎ ԿՈՄՊԱՆԻ» ՍՊ ընկերության տնօրեն Արսեն Քլջյանին:

Զեկույց (Արսեն Քլջյան) – Ծավ համայնքում գոյություն ունեցող դպրոցի նույն տեղում նախատեսվում է կառուցել 144 տեղ/հզորությամբ միջնակարգ դպրոց և 40 տեղ/հզորությամբ մանկապարտեզ: Դպրոցը հագեցած է լինելու կահույքով և կահավորված հանձնվելու է: Այս պահին կատարում ենք տարածքի ուսումնասիրություն ու տիպային նախագծի տեղակապման աշխատանքներ: Գյուղում կոյուղի չկա այդ պատճառով նախատեսվում է կառուցել մաքրման կայան, որպեսզի կեղտաջրերը մաքրվեն և 95 տոկոս մաքուր ջուր է դուրս գալու, որը գնալու է առվակ: Այս փուլում կարող ենք այսքան ինֆորմացիա տալ, մինչև նախագծային աշխատանքները վերջացնենք, 2-րդ փուլում ավելի մանրամասն կներկայացնենք: Նաև դպրոցում լինելու է ապաստարան՝ նկուղային հարկով:

Հարց (Անդրանիկ Հովակիմյան) – Շատ լավ, կա՞ն հարցեր:

Հարց (Կարեն Գրիգորյան) – Նախատեսո՞ւմ եք դպրոցում արևային կայան տեղադրել:

Պատասխան (Արսեն Քլջյան) – Այո, դպրոցի ձեռուցումը նախատեսվում է հոսանքով, ըստ դրա՝ տեղադրվելու է մաքսիմալ հզորությամբ արևային կայան: Իհարկե եթե դպրոցի տարածքն ու տանիքը թույլ տան մաքսիմալը տեղադրվի: Եթե ոչ, ապա ինչքան հնարավորություն լինի, այդքանն էլ կտեղադրվի:

Պատասխան (Անդրանիկ Հովակիմյան) – Շատ լավ: Այլ հարցե՞ր: Շնորհակալություն եմ հայտնում հանրային լսման մասնակիցներին և հանրային լսումը համարենք կայացած:

Հանրային քննարկման վարող՝
Կապանի համայնքապետարանի գլխ. և բնապահ. բաժնի պետ **Անդրանիկ Հովակիմյան**

Նախաձեռնող՝
«ՄԱԲՆԱ ԲԵՀԻՆԵՀ ՍԱՋԱՆ ՆԻՐՈ» ՓԲԸ տնօրեն **Ջավադ Սաիդի**